



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

5407 ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

27 ՅՈՒՆՎԱՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արցունիներուն Հոգեբանութիւնը

Լուսնին, տակ

Բանաստեղծութիւն

«Աւուլ»ը, Յ. Զիննիրնեան, Յ. Ոսկան

Ո՞վ Աղօթէր

«Ծաղիկ» Կանանց Շաբաթաբերք

ՍԻՊԻԼ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԹԼԿԱՏԻՆՅԻՆ

ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1907

114111

114111

114111

114111

114111

114111

114111

114111

114111


ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տաքիններէ իվեր կը դարմանէ ստամոքսի, աղիք-

ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջգային տկարութիւնները, հին եւ նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոսներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի:

(8—10)



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենայ լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼՍ

ՍԵՐԱՏԱՐ

1. Մեծ փողոց, Պոն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամիլէյի կայարանին դէմ.
1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամիլէյի կայարանին դէմ. 13.
- 2արշը Պօյու, Թ. 120.
- Դասեր եւ նորոգութիւններ ձրի.


Կատարել երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա՝ Մեծ Փողոց, Թիւ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

(8—10)

1908ի Ընդ. Օրացույցին համար Ս. Պատրիարքը ձեռնարկած է պատ-
րաստելու Կաթողիկոսութիւններու ցուցակը, ինչպէս «Միտական Բառա-
րան»ին շարունակութիւնը: — Տեղական թերթերու մէջ ծանօթ թղթա-
կից Գ. Կ. Ոսկերչեան էֆ. քահանայ պիտի ձեռնադրուի Եղեկից մէջ: —
Իզմիրի Ս. Հռիփսիմեանց վարժարանին մէջ տեղի ունեցիր է Տօնա-
ծառի հանդէսը: — Իզմիրցի Պեարոս Պաղբճեան ընտանիքը Պաղբճեան
Աղգ. Մանկապարտէզին նուիրած է հանգուցեալ բարերար Պեարոս
Պաղբճեանի մածողիբ լուսանկարը և հոյաշէն դաշնակ մը: — Իզմիրցի
բարեւէր Զօյրէն հետեւեալները 1906—1907ին դանազան անոք սաներ
որդեկբած են. — Տիկ. Դ. Եսայեան, Ռ. Պաղբճեան, Կ. Արապեան,
Յ. Իբրիքեան, Ս. Թաղարեան, Յ. Գուլումեան, Մ. Մերկրեան,
Ս. Սիւրբիտարեան, Վ. Սիւրբիտարեան, Մ. Աջնաւորեան, Մ. Գօ-
ճամանեան, Պ. Պերկամեան, Ս. Աւետիկեան 2ական սանուհի, 14
սակի: Ս. Գէորգեան, Ռ. Թովման մէյմէկ սանուհի 1 սակի=15սակի:
Տեարք Դ. Եսայեան, Եղբ. Պաղբճեան, Կ. Արապեան, Յ. Իփրիքեան,
Ս. Թաղարեան, Մ. Մերկրեան, Մ. Գօճամանեան, Ա. Պերկամեան,
Պ. Պերկամեան, Յ. Զաքեան, Քրիստ. Միւթ., Ե. Խօրասան, Օ.
Փաքլավանեան, 2ական սան 13 սակի. Ս. Ասլանեան, Ս. Գէորգեան,
Ս. Սուքիասեան, Յ. Կարապետեան, Տ. Գասպարեան, մէյ մէկ սան
2¹/₂ սակի: — Սըլաղ Ժամաներ է վերջերս Պէյրութի Ամերիկ. բժշկ.
վարժ.էն վկայ. Տօքթ. Լեւոն էֆ. Թորգոմեան: — Դեկտ. 28ին Եօղ-
ղատի մէջ կատարուեալ է նորակառոյց վարժարանին բացման հանդէսը:
— Ս. Պատրիարքը կոնդակով մը կը յանձնարարէ քահանայութեան
ընծայացուները գտնէ 6 ամիս առաջ ներկայացնել, որպէս զի եթէ անոք
եկեղեցական կարգերու անդիտակ են՝ կարելի ըլլայ զանոնք հմայցնել
այդ ծանօթութիւններուն: — Իզմիրեանց Գրական Յանձնաժողովին
պիտի ներկայացուին Ե. էֆ. Թէյեանի գիտական մէկ աշխատանքիւր-
թիւնը և Ս. էֆ. Թիւթիւնճեանի «Թրքահայ թատրոնը և իր աշխա-
տաւորները»: — Հանգուցեալ Տիկին Աղապի Տէր-Ներսէսեանի և Օրման-
եան և Տէր-Ներսէսեան գերդաստաններու բոլոր ննջեցեալներուն համար
կիրակի օր հոգեհանգիստ պատարադ մատուցուեցաւ Բերայի Ս. Ներսիս.
եկեղ.ին մէջ: — Պէյրութի Ս. Նշան եկեղեցիին մէջ տեղի ունեցիր է
Ամանորի հանդէսը, նախագահութեամբ Տ. Գէորգ վրդ. ձանաղեանի:
Ճառեր խօսեր են Պ. Եզնիկ Տէօլլէթեան և Պ. Խախամեան, և երգերը
վարեր է Օր. Մաննիկ Ոսկերչեան: — Նիկովիդից եկեղ. կալուած-
ներէն շերտատունը տարեկան 30 սակիով վարձու արուեր է (Մանիկ էֆ.
Պալութեանի): — Ս. Պատրիարքը այս իրիկուն Բերայի Ս. Ներսիս.
եկեղ.ին մէջ ծայրագոյնութեան աստիճան կուտայ Տ. Տիրայր վրդ.
Մարգարեանի: — Սամաթիաէն Տիար Ոսկիան Մարգարեան կը գրէ թէ
վարժարանին գատարակը Խորէն Անուշեան անուն ուսանողը ձեռած



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

54ԴԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

27 ՅՈՒՆՎԱՐ 1907

ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Արցունքներ կան շիր շիր սրտում, մեղամաղձոս,
Որոնք կուլան կարկրեիս անտիկ վրայ,
Ամեն կարիկ հեծկրթանք մը, կոծ մ'է բախձոս,
Եր գողին մէջ սառապանք մը կը բըրբըռայ:

Արցունքներ կան պայծառ ու ջինջ եւ անխնայ
Որ տրեւա նըռոյներով կը փողփողին,
Ծիրանածին անձրեւի պէս հանդարտ ու զով,
Երբոր տեղան, օղբ բոյր մը կ'առնէ հողէն:

Արցունքներ կան որոնք բըրբիջ ինձ կը բըլին,
Միտք գոռացող անպի նըման փոքրկայայտ,
Որ փայլակներ բօրափելով ծովին, հովին,
Մըռուտի պէս կը տարազունին կեդրոնախոյ:

Արցունք մ'ալ կայ որ միտք կ'այրէ, բայց չի կարիր,
Հեղուկ բոց մը, բուռն ըսպառիչ, տհեղ կըրակ,
Յամբած արցունք որ չի հասնիր, մինչեւ մոխիր
Կըտին աչներն, հողին դառնայ կոյս մ'աւերակ:

Ո՛վ արցունքներ, ամենեկիւ ալ ես կը հանչեմ,
Թէեւ զրոքախոս իմ օրերս քյուտերն ըլլամ,
Ձերմ յուզմունքով ըզձեզ կ'օրհնեմ ես յարածամ,
Ձեզմով կը գգամ սրբիս ապրիկն ես շառունակ:

ՍԻՊԻԼ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Գաւառական վարժարանի ուսանող մը, որուն հոգիին մէջ կ'երեւայ թէ բանաստեղծութեան Մուսան ոտքերը քիչ մը չատ լայն փռած է, սրտածմբիկ նամակի մը մէջ բողոքախառն ողբ մը կը բարձրացնէ, աղերսելով որ՝ «գարման մը խորհուրի իր ցաւին», «զինքը տանջող խլրաւմին»։ Իր ողբը կսկիծն է վարժապետին կողմէ բանաստեղծութիւն գրելէ արգիլուելուն, ցաւ մը, որ, իր ըսածին նայելով, քունը փակցուցեր է աչքէն և ակորժակը կտրեր։ Ահաւասիկ քանի մը յատկա՝ նշական մասերը իր նամակին, իրենց բոլոր զուարճալի ու միամիտ նոյնութիւնովը. —

«Տէր խմբագիր

... «Ինչպէ՞ս յայտնեմ կսկծկծանքս և բացատրեմ վշտակցումս, ինչպէ՞ս նկարագրեմ պէն դառնութիւնը որ մինչեւ հոգիս խուրտն նորաթիթիթ ծալքերուն թափանցած է ու կը կրծէ զանոնք, որպէս ցեցակեր(?) որդ(!) մը ծառի մը (փ)ունը, Մինչ զգածեալ գեղունակ արշալուսոյն ծողկափիւռ տեսիլքէն(?) գրիչի ձեռին, տրոփի սիրտի գիր արկանէի(?) զիմ ներշնչումներն, մեր դաստիարակ ուսուցիչը, անշնորհք, ապերախտ, անհոգի անյոյզ մի արարած, մօտեցաւ ինձ և նշմարելով բանաստեղծութեան էջս առաւ և պատուեց, փշելով(?) հոգին իմ ներշնչմանցս և գոհար հատիկներն իմ մտացս արտագրութեան։ Ի՞նչ պիտի ընեմ ես հիմայ, ինչպէ՞ս պիտի բռնեմ անգամ մ'ալ զանոնք, երբ թռան գացին մտքէս ու ձեռքէս։ Խնդրեմ դուք դաս մը տուէք այս ապաշնորհք հրէշ ուսուցիչին, և ըսէք կ'աշխէմ թէ պէտք է կոտորեմ գրիչս, երբ վրա ներշնչմանքներ հոգիս կը կրծեն տիւ և գիշեր և ցորեկ(?)», և քունը աչքերէս հեռացած է ու ակորժս (բ)ախած»։ . . .

Ապահովաբար այս լալահաւառ պարոնին կոտորած սիրտը փակցնելու և իր «ապաշնորհ» վարժապետին «դաս մը տալ» ու համար չէ՛ որ պէտք կը տեսնեմ անդադառնալու իր նամակին, որուն նամանները քիչ չէ՛ որ կը համարն խմբագրութեան մը։ Բաղմաթիւ ուրիշներու մէջէն, այս նամակին վերքերած մասնաւորապէս յատկանշական մէկ հարցն է, որ զայն արժանի կը դարձնէ նկատառութեան։ Անով կը շեշտուի և լուրեւեայն կը յուզուի բանաստեղծութեան սէրէն առաւարդ ուսանողութեան այն ցաւը, որ չքաջալերուելուն համար ա՛լ աւելի դառն ու անսփուփելի կը դառնայ, և ա՛լ աւելի ուժգին կոտորանքի մը ակտանիչը կ'առնէ՝ երբ արգելքի մըն ալ կը հանդիպի, ինչպէս եղած է Պառնասի Տաճարին որդեգիր վերեւի նամակը ստորագրող պատանիին։ Վարժապետը՝ փոխանակ քաջալերելու, խրախուսելու իր ուսանողին գրասիրական եռանդը, փոխանակ լաւագոյնին ձգտելու զգացումը և գիտակցութիւնը ներշնչելու՝ անոր, փոխանակ զայն առաջնորդելու, կը քաշէ ձեռքէն թուղթի այն կտորը՝ որուն վրայ դրոշմուած տողերուն հեղինակը իր պատանիի երեւակայութիւնով գիշերներ լուսցուցած է, և խոկումներու, երազներու, յափշտակութիւններու ժամն'ը սպաննած, կը

յարիշտակէ վայն իր արտադրութիւններուն հաճոյքովը գինով դեռատի հեղինակէն, կը պատռէ ու հովերուն կուտայ անոր ներշնչումները, ցոյսերը, խտէայնները, քայքայելով անոր մէջ յաջողութեան, փառքի, երանութեան ամէն երազ: Ինչո՞ւ այս անգութ հարուածը տղուն՝ որուն միակ յանցանքը զգացում ունենալը, իր ներշնչումներուն անաւը, և բնածին գրգռմով մը գրիչին յանձնելու եռանդն է իր յղացումները, յաւիշտակութիւնները, զգայութիւնները: Եւ ինչո՞ւ՝ այն բիրտ անարգանքը՝ զոր անիրաւութեամբ ուսանողին վարժապետը կը դնէ իր վարժունքին մէջ, տղուն ձեռքէն բանաստեղծութիւնը առնելէ ետքը, զայն պատռելով, բղիկ-բղիկ ընելով ու հովին տալով, ինչպէս կ'ընեն անպէտ պտուղը ո՞ր և է ապերախտ աշխատութեան մը:

Մասաղրական աշխատութեան նշանակութեանը ու բարձրութեանը գիտակ, և անոր ճանաչողութիւնը ուրիշներու ներշնչելու կոչումին մէջ եղող վարժապետի մը այս արարքին մէջ չկայ՝ դառն շեշտ մը՝ որ կը տխրեցնէ՝ կենդանի, խօսուն ու սաստկապէս վիրաւորիչ անարգանք մը ըլլալուն համար Բանաստեղծութեան, ամէնէն ազնիւ ճիւղերէն մէկը Գեղարուեստներու, որուն դէմ մտեցուած ասեղութիւնը՝ ըլլալով զգացումը գաւառացի վարժապետին, է՝ նաեւ ընդհանուր: Ձէ՞ որ գրականութեան այդ սեւին մշակումը քիչ մը շատ վերացական բան մը կը նկատուի մեր համայնքին գրեթէ ընդհանրութեան կողմէ, և մէկը որ բանաստեղծութիւն կ'ընէ, պարապ մարդու տեղ կը գրուի, խելքը կարճ, ծանծաղամիտ, վերացական մէկը կը համարուի:

Անշուշտ վերի բողբոջը ստորագրող բանաստեղծութեան սիրահար նորահաս պատանիին վրայ գրական մեծ ընդունակութեան մը հաւատքը չէ՝ որ այս անգերուն առարկայ կ'ընէ իր նամակը հարիւրաւոր ուրիշներու մէջէն: Իր գուարճալի գրութեանքէն իսկ յայտնի համբալ գրիչի մը արտադրութեանն ալ մեծ նշանակութիւն կարելի չէ տալ: Իր բողբոջին առիթ տուող վարժունքին մէջ խտացող ըմբռնումն է որ ուշագրաւ է, ըմբռնում մը, զգացում մը, զոր բանաստեղծութեան հակառակորդ վարժապետին հետ կը բաժնեն անհուն թիւով ուրիշներ: Վարժապետը կ'արգելէ իր սանը բանաստեղծութիւն ընելէ, հանրութիւնը մեծ կարեւորութիւն չի տար մէկու մը՝ որ բանաստեղծութեան պէս վերացական(?) բանով մը կը զբաղի, կը հեգնէ, կը քաշքշէ ալ զայն, այն զարմացումով թէ մտաւորական այդ զբօսանքին տէր մարդը ուրիշ բան չէ՞ գտած ընելիք, որ բանաստեղծութիւն կ'ընէ: Ինչո՞ւ այս խաւարամիտ ու յետաճնաց հաւատքը արուեստի մը վրայ՝ որուն նուիրուելուն մէջ մեղք մը չի կայ: Մարդկային նուրբ զգացումներէ մերկացած, արուեստի հաճոյքներուն ու վայելքներուն ուրացումովը պաշտուած գործնական մարդու ճառ մը կը քարոզեն ամէն կողմ: Իմացական մշակումներու այդ բանադրանքը արդեօք դպրոցներէն կը

սկսի՝ ուր տղուն ձեռքը չեն ուղեր դասագիրքէ զատ գիրք տեսնել, և բանաստեղծութիւն ընելէ կ'արգիլեն զայն: Գաւառացի վարժապետը միակը չէ իր օրինակին մէջ. իր ըմբռնումը՝ ըմբռնումն է նաեւ մեր ուսուցիչներէն և դպրոցի վարիչներէն մեծ մասին՝ որոնք հաշտ ակնարկ մը չեն քթիթեր՝ երբ նշմարեն աշակերտնուն սէրը ու եռանդը՝ գրականութեան օր և է մէկ սեռին, և տղոց ձեռքէն կ'առնեն բանաստեղծութեան և գրականութեան վրայ ամէն գիրք: Որչափ կանուխէն կը սկսի անտեսուիլ իմացական վայելքներու պէտքը. և որչափ կանուխէն կը մարեն տղուն մէջ այդ բնագոյէն բռնկած կայծը: Գործնական մարդ, գործի մարդ կ'ըսեն, և ուրիշ բան չեն ճանչնար: Հերի՛ք որչափ պատրաստեցինք այդ ապրանքէն: Մեր ամբողջ վաճառականներուն, հարուստներուն, ինչպէս միջին դասակարգի հայրերուն՝ դաւանները գործնական մարդիկ են՝ որոնց օտար կը մնայ իմացական աշխարհի վայելքը: Թող քիչ մըն ալ մտաւորական փառքերու ձգտող տղաք համարին. և եթէ անպատճառ ունեւոր դասակարգէն չսկսի ելլեն այդ հոգիով խմորուած կեանքերը, թող համեստ խաւերու ծոցէն ցայտին անոնք, իրենց միտքը ու հոգին պատրաստելով մոմի աղօտ լոյսերու առջեւ, և այդ լոյսով ուղղուելով դէպի Լուսաւորութեան աստարը, երբ պակսի իրենց ակնախտիդ վառքը փառաշուք լամբարներու: Տղայական նախափորձերու ծիծաղելի ու անյաջող հանգամանքը, պէտք չէ՛ պատճառ մը ըլլայ արհամարհանքի [*], ո՛չ մէկուն կողմէ, յուսահատեցնելու համար պղտիկ զգայութիւններէ, յուզումներէ ու սարսուռներէ ցնցուած հոգիները, որոնք չեն կրնար արտայայտու ինքզինքնին ա'յնպէս ինչպէս կը զգան: Անոնց մէջ, գրելու, քերթելու, արտագրելու պէտքին դարձնումը իսկ՝ ապացոյց մըն է իրենց մէջ խմորի մը, ընդունակութեան մը գոյութեան, քանի որ գրելու ցանկութիւնը բնածին է. և մինչ դպրոցի մը մէջ հազու հինգ-տասը ուսանողներ գրելու փորձութիւններ կ'ունենան, ահագին թիւ մը հաստ-գլուխներու՝ անտարբեր կը մնան գրելի հաճոյքներուն: Մշակուելով՝ նախապէս արհամարհուած շատ մը գրիչներ՝ կրնան կարողութիւններ դառնալ օր մը: Չէ՞ որ բնութեան օրէնքներուն կարգէն է առաջգիմութեան անյեղլի դերը: Երէկուան արհամարհուած, համբակ, անկարող, բթամիտ դաւանուած ուսանողները՝ կրնան վաղը բարձր արժանիքներով

[*] Այս սկզբունքին կ'ողորմի հրատարակութեան նպատակը մեր «Արձագանգ»-ի բաժինին, ուր պարզուած գիտողութիւնները՝ երբեմն խիստ ու կծու՝ կը հասկցուի անշուշտ թէ երբեք չեն ձգտիր վերաւորել ենթակաները, այլ առաջնորդել զանոնք իրենց անյաջող նախափորձերուն մէջ, գիտողութիւններով, թելադրութիւններով այն կէտերուն վրայ՝ որոնք գլխաւոր ու էական թերիւններ կը կազմեն իրենց արտագրութիւններուն:

յայտնուիլ և անցնիլ իրենց ուսուցիչը : Բնական ու անվրէպ է աս , ինչ-
պէս օրինակները կը հաստատեն մեր շուրջը , մեր օրերուն իսկ մէջ ,
ուր երէկուան իրենց իմացական պզտիկ փառքովը յոխորտացող զէմքեր՝
իրենց աշակերտներէն կոխողուած , տխուր յետամնացութեան մը մէջ
կը կաղան , կը խարխալեն , կը զեղերին :

Փախուկ , անզօր , համեստ փթթումով բացուող ծաղիկին մէջ ալ
յեանքի ուժ մը չի կա՞յ միշտ :

ԵՆՈՎԻՆ ԱՐՄԷՆ

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Ծո՛վն է , լուսինն ակ կը կրօղի
Բայց անոր դէմքն իր մէջ յաւէ
Իբեւ փայլուն բիծ կը պրօղի
Հրօսանքով մը վէճ ի վէճ . . .

Ծո՛ց ամենի , չե՛ս կրնար , ո՛չ ,
Ընդգրկումով խեռ ու անձուկ՝
Փարիլ լրման երկնի Տիկնոջ ,
Ու կը կոծիս հեղձամբղձուկ :

Մինչ տարփաւոր լրհակն ինքնին՝
Ձոր շո՛ղնչն հովին չէ կրնանած պիւրկ՝
Հրմայելով էջֆր լուսնին՝
Առագաստի կը բանայ գիւրկ :

* *

Խորհուրդի խռովքն , է ծովն անաստ
Մուրը հեղեղ լուսնին կարօտ ,
Բայց իր անհուն տի՛փն անբզգաս
Պատշաճ պատկերն կ'եղծէ իր մօտ :

Թովքն հաւաստին է լին լրսակ ,
Ճանանչներու չի՛նչ հայելի ,
Որուն անբիծ սիրոյն յաւակ
Լուսնի լուրջ դէ՛մք կը փայլի . . . :

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ ԳՈՒՐԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

«ԱՇՈՒՂ»Ը, Յ. ԶԻՆՃԻՐՃԵԱՆ, ՅԱԿՈԲ ՈՍԿԱՆ

Բ.

Բաւական տարիներ շարունակեցինք յաճախել Նիւքսէք Քալտըրըմի այդ գրատունը, որ ժամադրաւայրը դարձած էր մեր սերունդին պատկանող գրասէրներուն, մանաւանդ զպրոցականներուն: Սեւ մագերով ճանչցած էինք Աշուղը, բայց ահա ան կ'ալեւորէր: Իր գիտախուլ գլուխը արծաթի օծումը ընդունած էր, ալեւոյթը միշտ աւելի յուռթի կը դառնար, կը տարածուէր երակ երակ, յաջորդական ջաղբերէ վերջ յորդած գետի մը պէս որ անակնկալ փողբակներ և առու եր կը գոյացնէ իր ճամբուն վրայ:

Միշտ նոյն բարի, անարծաթ և անշահատէր մարդն էր: Գրեթէ չոր հայ կ'ուտէր և դրամը կ'արհամարհէր: Իր համբաւէն զիւթուած էին նաև այլազգի զպրոցականներ, ինչպէս գերման վարժարանին սաները, ինչպէս յոյն վարժարաններու և ֆրէյներու հաստատութեանց աշակերտները, և ինք երբեք խորութիւն չէր դնէր անոնց մէջ, խնդրուած գիրքը կը յանձնէր անակատ, կը բաւէր որ համոզուի ներկայացող տղոց ազգատութեան:

Օր մը բարի ու պարզազգեստ ծերունի մը յայտնուեցաւ այդ կրպակին մէջ: Զինքը նոր կը տեսնէինք, բայց այնքան ազնուութիւն, այնքան համակրելի քաղցրութիւն կ'արտացոլար իր ժպտուն և տարիքին լրջութեամբ սրբացած դէմքէն, որ նոյն իսկ առաջին օրէն իրեն կապուեցանք: Նորեկը բազմաշխատ ու զարգացած մարդ մըն էր, Զինճիրճեան Յարութիւն էֆէնտին, և կարծեմ ուսուցչութիւն ալ ըրած էր ժամանակաւ: Աշուղին հետ ընկերովի պիտի վարէր գրատունը և իրեն հետ բերած էր մասնաւորաբար հայերէն հին տպագրութեանց ստուար մթերք մը որ շատ նշանաւոր յաճախորդներ պիտի պարգեւէր այդ համեստ կրպակին: Շատ գրագէտներ, ուսուցիչներ ու եկեղեցականներ կը սիրէին գրատուն հանդիպիլ, մէկ քանին գիրք մը գնելու, և ուրիշներ տեղեկութիւն խնդրելու համար դարաւոր տպագրութեանց մասին որոնց նկատմամբ անսահման հմտութիւն ունէր Զինճիրճեան: Այդքան ուսումնականներու հետ, տարիներու ընթացքին, մէկ հարուստ միայն տեսանք այնտեղ, Վսեմ. Գրիգոր Խան Շամտանճեանը, որ Նիւքսէք Քալտըրըմի անտանելի զառիւլայրին վերելքը արհամարհելով կուգար համբերութեամբ պուֆեհները կը պրպտէր՝ գոհար մըն ալ աւելցնելու համար իր հոյակապ մատենադարանին:

* *

Ձինձիրճեանի գառնաւոր աղքատ դպրոցականներու և ընթերցասէրներու բաղդը չգոցեց, ընդհակառակը: Նորեկը նոյնքան փափաքող էր ընթերցասիրութեան տարածման որքան անշահասէր: Միեւնոյն մաքուր ու վճիռ ակէն ըլխած գետի մը երկու թեւերն էին կարծես՝ որոնք տարբեր հողեր, տարբեր ածուներ կտրելէ վերջ իրարու կը միանային, աւելի մնուցիչ ու բարեւոր դառնալով: Գրատան աւանդութիւնը անփոփոխ մնաց, և աւելի խելացի ուղղութիւն մը ստացաւ, որովհետեւ Ձինձիրճեան չէր գոհանար միայն խնդրուած գրքերը տալով, այլ ինք իր կողմէ կը թելադրէր անպատճառ այս կամ այն գիրքը կարդալ, այս կամ այն հեղինակին ու հրապարակագրին հետեւիլ: Ինք իր նախասիրութիւնները ունէր, գրողներ կային զորս կ'ատէր և որոնց գործերէն կը զգուշացնէր գրատան յաճախորդները, գրողներ ալ կային զորս կ'ատուածացնէր: Ու գրեթէ երբեք լիատակար չէր դառնար իր ընտրողութիւնը, որովհետեւ լուսամիտ մարդ էր, ատենօք խառնուած էր իր ժամանակները յուզող իմացական պայքարներուն, ինչպէս նաեւ կրօնական հակաճառութեանց, միշտ կատաղի հակառակորդ մը հանդիսանալով «խաւարեալ»ներուն:

Այսպէս՝ կ'ատէր մանաւանդ Տէրոյնց պատուելին՝ զոր պարզապէս ու անասի մը հրճուանքով՝ «Չամուռճի» կ'անուանէր, և որուն ո՛չ մէկ հեղինակութիւնը կը պահէր գրատան մէջ: Ինք չեկած՝ Աշուղը բաւական բան ունէր անոր գործերէն, մանաւորաբար Խաւարիտի երկրորդ հատորէն քանի մը տասնեակ օրինակ, զորս ուղեց նպարտաճառի մը ծախել: Բայց գրքերը այնքան փոքրագիր էին և թուղթն ալ ա՛յն աստիճան նուրբ էր որ նպարտաճառը մերժեց: Վերջէն՝ ամէնքը մէկ վիճակեցան Պարսկի մը՝ որ շաքարով անգամ մը կանոնաւորաբար խանութ կուգար՝ բոլորովին անվաճառելի կամ պակաս գրքերը գնելու... օխտն տասնընից բարայի: Պրուսացի նշանաւոր հրապարակագրին գործերը՝ այդ կերպով խառնէի պահարան դարձան, որովհետեւ Պարսկը գնած գրքերը քսեւ կը չինէր և խառնէ ծեծողներու կը ծախէր:

Կը հարցնէինք Ձինձիրճեանի թէ ինչո՞ւ այդքան կ'ատէր գրչի վաստակաւոր մը որ կրնար իրաւամբ պարծիլ թէ մեր ցեղին ամէնէն հմուտ, ամէնէն բազմալիաւ տարբերէն մէկը եղած է:

—Որովհետեւ, կը պատասխանէր, ցեղին զարգացման գործը գրեթէ քաւորդ դար արգելած ու կասեցուցած է իր խաւարակուռ ու յետադէմ մտքին հնարած կապանքներուն շնորհիւ:

Ինք ալ անոնցմէ էր որոնք, թերեւս անիրաւաբար, համոզում գոյացուցած էին թէ Տէրոյնց անկեղծ չէր, «սուտ խենթ եղած՝ վանքին հուերը կ'ուտէր», թէ առ երեւոյթս Հայ Եկեղեցին պաշտպանելով՝ ձեռքի տակէ՝ օտար յարանուանութեանց տարածման ու արմատացման

կը նպաստէր: Նոյն ինքն Յակոբ Պատրիարք այս կարծիքը չէ՞ յայտնած արդէն, Պատրիարքարանի հին դիւանաթուղթերուն պատկանող նշանաւոր նամակի մը մէջ գրելով թէ Տէրոյնց կաթողիկոսներուն կողմը կը տաչէ:

Զինճիրճեան՝ աւելի առաջ երթալով՝ տապանադիր մըն ալ պատրաստած էր Չամուռճի պատուելիին վրայ, կարծեմ Պէրանժէի երգերէն մէկը չարափոխելով: Ամէն անգամ որ Տէրոյնցի խօսքը կ'ըլլար՝

— Ե՛ս, ե՛ս պիտի փռաւորեմ ու յաւերժացնեմ անոր յիշատակը, կ'ըսէր տարօրինակ ժպիտով մը:

Ու մինչդեռ զարմանքով զինքը կը դիտէին, ձեռունքները տաբափն գրգանը կը դնէր և խոնութին մէջ ման գալով կ'արտասանէր այդ տապանադիրը՝ զոր նոյնութեամբ կ'արձանագրեմ այսօրեւ:

Երբեմն էի ծնունծու, անհաւատ ու քինահալ,
Խաբէութեան ի կատար յաջողեցայ բարձրանալ.
Սուրբ Հայրերուն այն ասէն առի բարձր ու ծու բանի
Եկեղեցեաց սրբազան պահարաններ թալլեցի,
Առաքինեաց սուրբ ոսկերք կրակներու մասնեցի

Կեղծպարիշնէր,
Համխոյր մասիք,
Համբոյր մասիք,
Չամուռճիին
Նշխարներուն:

Խաղը քիչ մը չափազանց անողոք ու չար էր, բայց կը միաթարուէինք՝ մոտեցելով թէ Տէրոյնց չա՛տ աւելի անկարելիք և անգուրթ ընթացք մը բռնած էր իրեն ժամանակակից և անհունապէս աւելի արժանի ու երախ ուսուոր անձերու դէմ: Պատուելի՛ն՝ ցանածը կը քաղէր:

* * *

Երբ այդ պատանուութեան տարիներու հօթերս ու թուղթերս կը խառնեմ, քանի՛ քանի յիշատակներ, քանի՛ քանի դէմքեր իրարու կը յաջորդեն, կը սոսկին կ'անցնին արագ ու շոյտ՝ ինչպէս սինէմաթօկրաֆի մը ցոլացուցած մարդիկն ու տեսարանները:

Ահաւասիկ ոտանաւոր մը Աղամեանէն, զոր օր մը հին գրքի մը՝ Սրապիոն Հէթիմեանի Տաղերուն մէջէն գտանք, ընդօրինակուած կնոջ նըրկն ու վարանտ գրով մը, յայտնի չէ թէ ի՛նչ ներքին ցաւի, ի՛նչ վէրքերու իբր բալտսան ծառայած .—

Շողափայլ վառ երկնից տակ,
Եւ առուակին քով յսակ,
Կը հանգչէինք գիրկ գրկի,
Զերթ բոյնին մէջ զոյգ մ'ստացակ:

Փայլէին հոյլք շողազգեսց
Երկնից վրայ ցան եւ ցիր,
Եւ հոն շրթամբք սիրամած,
Համբոյրովդ զիս մասնեցիր:

Քեզմով միայն կը զգայի
Սրտիս բաղխիւնն կենդանի.
Քեզմով միայն իմ հոգիս
Շնչէր յիս կեանք զարնայնի:

Եւ այն համբոյրն որով զիս
Վայրկեան մերկինք թրուցիր,
Նոյն համբուրիւ խորն շիւմիս
Անգընիաբար պեղեցիր:

Ինչպէ՛ս սիրոյս իմ փոխան
Փակեցիր զիս ի դամբան,
Այդ համբոյրով մահաշունչ,
Դասապարտեմ յաւիտեան

Որ կուսական քու այտեր
Ծածկեն համբոյրք անխօսիր
Անարգանաց վաճշուէր:
Յայնժամ յիշէ՛ դու զիմ սէր
Ձոր համբոյրովդ մասնեցիր:

Որչա՛փ տարբերութիւն այս յուսահատ ու դառնացած Աղամեանին
և այն միւս Աղամեանին միջեւ՝ որ խայտառքին ու հրճուալիւր ցնծու-
թեամբովը կ'երգէր և կամ երգած էր առաջները.

Ձի քոյ ծոցում, ո՛վ Օրթագիւղ,
Թարմ հասակով զարնանաճիւղ
Սիրեցի ես եւ սիրուեցայ,
Որով հոգիս մինչ արդ ցնծայ:

... Դարունն, ամառ, ծաղկունք, երգեր՝
Հոգւոյս ի խոր ո՛վ իմն ընկեր,
Քեւ զարթեցան, երբ քոյ աչեր
Տեղացին ինձ սիրոյ պաշեր:

Ձեմ գիտեր թէ որո՛ւ քով մնաց բնագիւղը այդ քերթուածին որ
չառ կը նսեմանայ ողբացեալ արուեստագէտին լաւագոյն քերթուած-
ներուն քով: Բայց կրկին ուրախ եմ ժամանակին զայն ընդօրինակած
ըլլալուն՝ որովհետեւ անտիպ է. դոնէ՛ Հ. Վարդան Վ. Հացունիի
հրատարակած Քերթուածի Հոչակաւոր Դերասան Պետրոս Հ. Աղաւ-
եանիին մէջ անոր օրինակը չեմ գտներ: Ապահովաբար դրուած է
վաթսուներկան թուականներու վերջին տարիներուն, երբ Աղամեան կը
մասնակցէր Վարդովեան խումբին, և այնքան սերտ ու մտերիմ կապե-

բով զօգտւած էր օրուան թատերադիրն՝ րւն՝ մասնաւորապէս թովմաս
Թէրզեանի հետ: Ամէնքն ալ երկտասարդ էին այն ատեն, խանդով
ու եռանդով զեղուն, յիշատակելի իրենց գործունէութեամբ ու նուիր-
մամբ: Տարակոյս չկայ որ ամէնքն ալ իրենց պզտիկ սիրոյ պատմու-
թիւնները ունէին: Բարքերը տակաւին նոր ազատագրուած էին ամի-
րայական ըմբռնումներու խոտապինդ կապանքներէն: Հայ աղամարդն
ու աղջիկը դեռ նոր սկսած էին իրարու հետ աշատօրէն տեսնուելու
իրաւունքը վայելել, և բանաստեղծութիւնն ալ իր կարգին ենթա-
կուած էր այդ յեղաշրջութեան ազդեցութեան, ստանալով անձնական
երանգ մը, սիրատունչ ու «ամբարիշտ», բոլորովին հակոսանեայ երբեմնի
անձնութեայ ու «քարեպաշտիկ» ուղղութեան: Նոյն ինքն Աղամեանի
այդ քերթուածը մէկ վաւիւրով չէ՝ Թէրզեանի «Աթաբուս»-ին, նոյնքան
յուսահատ ու ցաւահար, և ճիշդ այդ ատենները գրուած:—

Սիրոյ շաճարն յոսով մըսայ եւ անդէն
Քաղցրաժպիտ եւ՝ քնքոյշ
Ինձ մօտեցաւ դիցանայշ,
Իր ծոցին մէջ մոլորուէր՝ սիրս ապագէն,
Բայց մինչ զլուխ աներկիւղ կ'հանգչէր...
Նա՛ մահնէր...

Կարծես ամէնքն ալ այդ միեւնոյն հիասթափման ենթարկուած են,
խանդավառ, յաճախ որոտաղին վեր սցմանց ընթացքին՝ յանկարծ տըխ-
րութիւնը եկած ճնշած է իրենց հոգին, և ա՛հ յուսալից ու սիրազեղ
տաղերուն յաջորդած են ճշմարիտ լալօններ, ողբադէ՛հ արձագանգ
խոցոտուած սրտէ մը բլլած աւաչներու: Աղամեանի ու Թէրզեանի
այդ տողերը տարէք դրէք Հէքիմեանի քերթուածներուն քով. ա՛նոնք
իսկոյն պիտի եղբայրանան, իրարու պիտի ձուլուին, պիտի նոյնանան
իրբ միեւնոյն յուսահատութենէն, միեւնոյն ցաւէն ու կոտտանքէն
ծնած նոյնանման ողբեր:

Ո՛հ, զհամօրէն հիւժս ծաղկանց
Թշուառ պըւէսս ես փորձեցի՝
Եւ զի՛նչ փոխան այդչափ զրգանց
Դառն ի հոգեռջ մրու քաղեցի
Եւ ուսայ թէ
Է երջանիկ նա որ ընդ հողով ծածկեալ կայ

Ահա նաև օրինակ մը Թղլեանէն, հետաքրքրական իբր միալանկ
քառերով կազմուած ոտանաւոր՝ քիչ անգամ միայն փորձուած մեր
քանաստեղծներուն կողմէ:

Ա՛հ,
Մահ,
Քեզ

Ես
Գամ
Մ'նամ:
Բա՛ւ
Յաւ:
Ե՛րթ
Լո՛յս,
Մերթ
Յոյս,
Ո՛վ
Ծով,
Ա՛ռ
Տար
Զայս
«Վա՛յ»ս
Յիւր
Լուր:

Եւ տակաւին Պէշիքթաշիեանը կը մոռնամ:

Այդ չէ՞ր արդէն ժամանակակից զաւեշտագրի մը իմաստութիւնը. —
«Սէր»ը «Ե»ով խայմախ է, «Է»ով ալ՝ շատ անգամ երեսարար է...

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Ո՛Վ ԱՂՈԹԵՐ

Վարդապետն անգամ մը հիւանդ, շատ հիւանդ, դռնէ իր հեւքն ու գալարքը այնպէս կը ցուցնեն, քանի մը օրերու համար կը թողէ իր բուն սեպհական տունը, որ նոյն տոնին իր պաշտօնատեղին՝ առաջնորդարանն ալ է, եղբօրը տունը կ'երթայ ապրիլ. հոն կլին կայ, հոն աղբար աղբորդիներ կան, որ եօթն օտարին համար ալ իրենց մարդավարի կերպերն ու կարեկցութիւնը ունին: Եղբօր տունն ու տունեցիները հաճելի ամէն պայմաններով:

Եղբօր աղոց մէկը դեղագործ՝ տա ալ ուրիշ առաւելութիւն մըն է որ իրեն պէս հիւանդի մը հարկաւորած դեղերը խնամոտ ձեռքով մը պատրաստուին ու վերջն ալ նոյնքան բնական որ անփոխարէն մնան: Եղբայրը յարգուած ժողովրդական քահանայ մըն է, ունի երեք-չորս հատ ժմած տղաքներ, հարմեր, աղէկ է ժամանակը, աղքատ չըսուիր, աղոց վաստակն իրենին հետ շնորհքով տուն կ'ապրեցնէ: Ինչպէս կ'ըսեն, քահանային համար ըսեր են կարծեմ, անոր համար մէկ մեռել, երկու ծնունդ ճոխ ջրաղաց մը կ'արժեն:

Վարդապետը շատոնց բաժնուած անկէ, իր առանձին տուն տեղն ունի ու մէկէ աւելի ունի, հարուստ է, հարուստ անով ալ որ իր բուն նստած տունին մէջ կ'իններու բազմութիւն մըն ալ կայ, որ իր սպասուհիներուն սիրուն տարմը պիտի ըլլայ, սպասուհի՝ ու, մէկ հատ ալ չէ։ Անոնց ո՛ր և է մէկը իր ձեռքին ջուրը լեցնելու գործ մը կ'ընէ, ուրիշ մը ոտքերուն ջուրը, վերջին մըն ալ անոր կուրծքին վրայ Լեդէի աղբիւրէն ջուր մը կը սրսկէ։ Վարդապետն իր շուրջը այսքան մը ջրկիրներ ու սպասարկուներ ունենալով մէկտեղ, հիմա, ինչպէս ուրիշ տաններ ալ, երբ քիչ մը քիթը ծռի, երբ հէնց հարբուխ մը կ'ստ հազ մը ունենայ թիթեւ, ինքզինք չի վստահելով միւսներուն խնամքին, հոն կ'ըլլայ միշտ, ուր ծնած էր, իրիցկիւնն ու ասոր հարսերը մանաւանդ մատաղ ըլլալու աստիճան անձնուէր ծառայութիւններ մը կ'ընէն իր անկողինին բոլորտիքը։

Ան օրերը Պոլիսէն նոր դարձած առաջնորդի պաշտօնովը, ո՛վ զիտէ աս անգամ ալ ի՛նչ փոխարէնով գնած ալ, քովը եկող գացողներուն ալ վերջը չի դար։ Կուգան մէջ մը անոր նոր պաշտօնը չնորհաւորելու, մէջ մըն ալ հիւանդութիւնը այցելած ըլլալու արհուսածութիւններով։ Անգամ մը եկողը կրնայ ըլլալ որ անգամ մըն ալ գլուխ երեւցնէ վարդապետին քով, այս վերջինով վարդապետը աւելի մօտէն համոզելով թէ՛ անոր բացակայութեան օրերուն՝ ինքը միայն, ինքն էր որ ամէնէն առաջ իր սիրելի առաջնորդին վերադարձը խնդրող հանրագիրը կը ստորագրէր ու եղբ կրտսին վրայ ուրիշներու ալ այնքան դժուարութիւններով ստորագրել կուտար։ Ու տեսնելով վարդապետը թէ՛ բարի ու աշխու են այն ամէնքը նոյն իսկ իրենց կեղծաւոր ու շողքորթ խոտովանութիւններուն մէջ, զանոնք պատուելու համար, անգամ մըն ալ իր քմծիծաղին չնորհքները կը նետէ անոնց երեսին, ու ոտքի վրայ սպասող տունեցիներուն երկրորդ ու երրորդ սուրճ մը կ'սպասարէ. աս ապասպանքներն ալ մի՛ մտածէք որ անուշ չեշտեր մը ունենան։

Բայց մինչեւ ե՞րբ այսպէս։ Աստծու մարդը գոնէ վայրկեան մըն ալ ինք ըլլայ խորհողը թէ՛ իրեն համար օրը օրին չուայուած այն ծախքերն ու ծառայութիւնները քիչ մըն ալ իր քսակին մէջ գտնուածներովը փոխարինուին, քիչ մը գոնէ իր ձեռքը բռնէ իր երեսին. չէ՛, վայրկեան մըն ալ չի խորհիր այսպէս, ասանց մ'անգամ չի տրամադրեր, նոյն ատեն սակայն ախորժակն ալ բացուած ու հետզհետէ սովածի մը երախով կը կլէ առջեւը հրամայուածները, կով մը կ'ուտէ, դուք կ'ուզէք, այսքանն ալ չափազանցութիւն հասկցէք։

Այս վիճակին մէջ, անցեր է արդէն ամիսը, ա՛լ հիւանդ չէ ամենեւին, բայց նորէն չի հեռանար, ու հիմա պաշանջն ալ ան, որ ճաշի սեղանին վրայ, որովհետեւ բժիշկն ալ նոյն խորհուրդը թեւադրած է եղեր, ջուրը գինիի փոխուի. չէ՞ որ Տէր Յիսուան ալ այնպէս մը կը

պահանջէր օր մը ու վայրկեանապէս ուզածը կ'ըլլար: Գինի, անպատճառ գինի ու անպատճառ՝ անխառն ըլլալու պայմանով:

Տունեցիները նեղուիլ կը սկսին, կարճ պիտի ըսենք, բոլորին մէջ շատ աւելի իրիցիկնն է քրթմնջողը, երիցիկնը՝ խաթուն կին մը, բայց փոխուած է վերջապէս: Հակառակ վարդապետին մտերիմ՝ վերաբերու-
թիւններուն, ինք անոր երեսն ալ չուզեր նայիլ:

Իրիցիկնը չեա գիտեր ի՞նչ աղբիւրներէ, ան մէկ-երկու օրը այնպէս լսած կ'ըլլայ թէ՛ վարդապետ տագրը իր մէկէ՛ աւելի տուններն ու խանութները ամբողջութեամբ անոնց նուիրած է, որոնք իրեն հետ ո՛ր և է ընտանեկան կապ մը, տունըթիւն մը չունենալով մէկտեղ այնքան մ.ժ հարստութեան մը կը տիրանան, ասդին ալ իրենց բաժին հանուածը տարապարտ յոգնութիւն ու համոռմները միայն, որոնց ծանրութեան տեսակին շունն ալ չի տանիր: Խնդիրն ալ իրաւ է որ իրիցիկնին լսածին պէս է. հայր սուրբը որքան որ գաղտնի ուզեր էր պահել այդ տեսակ փոխանցման գործողութեան մը պարագաները, բայց վերջապէս յայտ-
նուեր է բանը. այն նկատմամբ հիմա շատերն են որ նոյնիսկ իրարու մէջ հեռաքրքրող մանրամասնութիւններ մըն ալ կ'ըսեն: Քահանան ու տղաքն ալ լսեր են խնդիրէն, բայց ասոնք չեն հաւտըցած, ինչպէս ուրիշ ատեններ ալ անկարեւոր գտած էին ու յաւէտ թշնամութիւն-
ներու վերագրած: Բանին մէջ ան ալ կա՞յ որ գաւաթ մը ջուրի փոխա-
րէն ահագին հարստութիւն կը հրտակուի:

Իրիցիկնը ան խօսքը լսած օրն ալ համբերելու արիութիւնը կ'ունե-
նայ: Ջայն ձուն չի հաներ, բայց ալ հոգին ալ բերանը եկած ըլլալու աստիճան խեղդուիլ մը կ'զգայ, քահանայ ամուսինն ալ ո՛ր և է փախ-
կանկատ մտածումով անհալորդ կը պահէ իր գիտցած ու զգացածներէն:

Իրիցիկնը առտու մը ժամէն կը դառնայ ու վարկեանին ձեռքը զբաղում մը ձգելու համար, պարտէզ կ'իջնայ ծառերուն տակ թափթը-
փուք մը կը ժողվէ. բայց հնա՞ր է որ անչա՛ տագրի մը ըրած ու վերջացուցածները միտքէ հանէ. ան ընտանիքն ի՞նչ կապ ունի վարդա-
պետին հետ, այն կինն ու կնկան պարագաները վարդապետի: Բերանը ի՞նչ համ բերած պիտի ըլլան, որ աս ալ անոնց ըրածը փոխարինելու համար անոնց իր ամբողջ ունեցածը կը կտակէ և՛ կ'ըսեն, օրինական պայմաններու գործադրութիւնով մը փակեր է խնդիրը: Իրիցիկնը գետին գձկած՝ ծառներուն տակ՝ ան առտուն փէջ մը չոր թութ կը ժողվէ ու միտք կ'ընէ՛ նաեւ որ ծիրանիներուն ու խնձորենի-
ներուն տակ թափածներն ալ բանի մը բերէ. ան առտուն ձայն ու ճնճուկները պարտէզին մէջ շատ գործ բացած են մեր խաթուն երիցուհիին: Պարտէզը՝ վարդապետն ալ ահա, ասոր ետեւէն գուռը բայ ձգուած՝ գիրուկ, կարմիր աքաղաղ մըն ալ, ասի բոլո-
քովին անախկալ, որ հարարտ ու համաշճակ քաղուածքով մը չիտակ

բանջարանոցին վրայ կը յարձակի ու անմիջապէս ալ քճքճուած քին կ'սկսի: Իրիցիկնին համար ան երկուքն ալ աներես հիւրեր, բայց ինքն ալ հիմա նախապէս անոնց ո՞ր մէկը պիտի սկսէր քճքճել ու վախցնել:

Արի տես որ վարդապետն հիմա հոս ալ իր նազին ու պահանջներուն մէջ. — Իրիցիկն, Իրիցիկն, կ'ըսէ, Իրիցիկն, աղջիկս. — Հրամայէ, կը լսեմ արդէն. — Իրիցիկն, խուզում, աս իրկուն ալ աս խոռոյը մոռ-
թէիր որ բերնակս բան մի դպնար, երկու օր է որ հիշ համ չեմ տուներ կերածներէս, եղով տապկէ, վերջն ալ քանի մը սառմա կաթեցուր վրան. աս ալ կը լսեմ օրհնած, հաւ իւրամի գինիով որ չի սառկուի, խաշած լահանի տատ կուտայ: Հաւամոլ արեւուկը աղւոր չի բացատրեր իր բերանին այնքան նրբին ու զգայնիկ փմբը: Խաշուած հաւը խաշուած կաղամբի համ կուտայ եղեր: Աս ատեն իրեն բալ, Տէր Աստուած, ու ըլլար փոփոցող մը թէ՛ հապա, ալա վարդապետ, քու ան քարոզ-
ներդ ինտոր կը մարսեն մօիկ ընողները, որ ջուրով խաշուած շողբամէն ալ անլի, անհամ փոխեցուցիչներ են: Իրիցիկնը կը սլայթի, Իրիցիկնը չըթունքին ծայրը եղերած լուտանք մը գտակու համար, անդին գետինները կը ճանկուտէ:

Աս օր հիշ ծայն չես տար, աղջիկ, կ'աւելցնէ ան՝ իր ձեռքովը ինձոր մը փրցնելով ցածկեկ ճիւղէ մը, հարմներուն դօրծ չի ձգես կ'ըսեմ, ձեռքովդ տապկես, հարմները աս արալըս քինթփինչ մը կ'ընեն կարծես, գիտեմ, շատ ձանձրացուցի անոնք ալ, ես նորէն քեզի կըւզէմիչ եղեր իմ, Իրիցիկն, աղջիկս, մոռթես, ձեռքովդ տապկես. — Աղէկ ա, աղէկ ա, դուն մինակ հրամաններդ ըրէ. — Հրաման չէ ա խուզիկ, Իրիճա հասկցիր. — Ես ձեռքովս տապկիմ որ դուն ալ ինչո՞վդ ուտես. — Ա՛ս ինչ, Իրիցիկն, ինչո՞վս պիտի ուտեմ, ամէն օր լինչպէս կ'ուտէի. — Աս օր շուտիկ կեր, աս օր ալ շան լախամանով կեր, հասկցա՞ր մի, վարդապետ, ալ ասոր հերքը կ'ըսեն, համբերութեան ալ վերջն է կ'ըսեն: Վարդապետը ասի ի բերան շանթահար կ'ըլլայ, պատասխան մը ճշտորեւու բռն մը: Բանիկ մըն ալ չի գտներ, չլիքը դանակին տակ քսուսդ այծի ձէն մը կը հանէ միայն, բա՛, բա՛, բա՛. — Բարայիդ ա, փախայիդ ալ, սիւսլիւ չըլտոի ան չգիտեմ ինչե-
րուդ ալ:

Ու բաղդաւոր աքաղաղն ալ այն կողմէն սուռոյք մը պարզելով, իր չիկորակ կուրծքէն ճիչ մը կ'երկնայնէ, աս ալ ապահովապէս Իրիցիկնին ըսածը կրկնելու համար, ռուսիկս կե՛ր...:

* * *

Այդ դէպքէն վերջ, որուն տխրամտես վկան ու արձագանգողը վարկեանին իր ձիւն աղատող աքաղաղը կ'ըլլայ միայն, երկար տարիներ կ'անցնին. մեռած է խեղճ Իրիցիկնը, մեռած բարի քահանան իր անու-
զաւերուն մէջ ու նոյնպէս վերջացած շատոնց հաւնոցին շահաւոր,

— աքաղաղը, — անշուշտ վերջապէս անքնական մահով մը, ողջ մնացողը ան առաջնորդ վարդապետն է որ մօտիկ իննիսուն տարի կ'ապրի :

Երկու շաբաթ չընեն որ ապրելու յամառած ան եկեղեցականն ալ իր վախճանին կը դիմէ ու անշուք թաղումով մը գերեզման կ'իջեցուի :

Վրան հանդիսութիւններ չեն կատարուիր, ո՛չ ձայն, ոչ դամբաւանան, ոչ թաց թարթիչ մը գոնէ որ իր գերեզմանին շիտուած ըլլայ : Ժողովուրդը չի դնաց իսկ յուղարկաւորութեան, չլացաւ բնաւ, անոր համար որ տարիներու ընթացքով բարոյապէս զինքը խեղդող մղձաւանջէն կ'ազատէր, սիրածներն ալ չլացին այն որոշ պատճառով, որ հիմա քան երբեք աւելի իրական ու անկաշկանդ տէրերը պիտի ըլլան անոր հարստութեան :

Իսկ բուն ազգականները՝ իրիցկիներն ազաքները, երբեք չի ակնդէման, նոյն իսկ թաղումին ալ դժուար գնաց մէկը, որ ինքզինքնին աւելի ստոյգ, աւելի հաստատուն իրողութեան մը տուելու գտան հիմա : Վարդապետը աս վերջիններուն գէթ քահանայ աղբօրն ու լուսահոգի քահանայուն հին յիշատակ, մաշած ասեղ մըն ալ բաժին չէր հանած :

Խղճամիտ բարեյիշատակը, կ'ըսեն, իր մինչեւ վերջին հազհազին, միտքը պահեր կամ տառմոքսին մէջ չի մարսուած գէշ թիթու մը զգացեր էր ան ինչ ատենի շուտիկը, որ իրեն հրամցուեր էր : Պահեց ա՛ն, գալարուեցաւ անով, մեռաւ ան շուտիկով, որ ինքն ալ է՛ն վերջը, բուն իսկ իր ազգականներուն ըսէ ու արձագանգէ իր գերեզմանին խորքէն. «Մինչ ուրիշներ, ինձմէ՛ եօթն օտարներն անգամ իմ ձգած սոկեզօծ շաքարներս պիտի ուտեն, դուք ալ շապ ու շուտիկ կերեք» :

Բայց աս գործը զիտցող կրօնաւորն ալ մարդ վերջապէս ու սխալով, երեսուն տարի առաջ իր գերեզմանը իր իսկ ձեռքովը պատրաստելու ատեն, մոռցած էր անոր երեսին տապանադիրն ալ իր ձեռքովը արձանագրել. այդ տեսակ գործ մըն ալ ինձի պէս ամբարշտ ստահակի մը ձգեց որ երկաթի ծայրով մը փորագրեմ տապանին երեսը. — «ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՅ, ՆՈՅՆ ԻՍԿ ՀԱՒՈՒՅ ՈՒ ԱՂԱՒԵՍԱՅ ՃԱՇԱԿԻՆ ԵՒՄ ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ. ԵԿԻ ԿՐԾԵԱՒՈՐ, ԵՐԹԱՄ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ, ԱՂՕԹԵՅԷՔ ԶԻ ՈՉ ՅԵՇԵՍՅԻ ԳՈՐԾ. ԵԱՂՍ ԻՄ ՄԵՂԱՆՁԱԿԱՆ» :

Բայց ո՞վ կար որ աղօթէր, վարդապետ,

ՅԼԿԱՏԻՆՅԻՆ :

Ամէն կողմէ համակրանքով ողջունուեցաւ «Ծաղիկ» [կլնական (կանայն) պատկերաշարդ շարաթաթերթը: Քաջալերելու համար իր սեռին մէջ մէկ հատիկ և անդրանիկ այս ծաղիկը՝ շատեր բաժանորդ եղան անոր բաժակին, սպասելով ու յուսալով անկէ գրական փափկիկ հաշակ, համ ու հոտ:

Բառախաղ մը չըլլայ՝ ծաղիկ մը որ բնութեան ծոցէն է փրցուած, կը սփռէ, կը շնորհէ իր հոգն ու բոյրը, առանց դասակարգի ու սեռի խտրութեան. ան իր բնականին մէջ ունեցածն է որ կ'արտադրէ. ո՛չ աշխարհաբար հոգն է, ոչ գրաբար բոյրը. ո՛չ հարուստին համար կը շուսլէ, ո՛չ աղքատին կը զլանայ. կո՛շտ ձեռք մըն է զինքը փրցնողը թէ փափուկ՝ հոգ չընտրէ: Ծաղիկ մը՝ է ինքը՝ վայրի կամ բնաստուն. կ'աճի կը բարձրանայ, պտուկ կը կապէ, կոկոն կը բանայ ու հոտոտելիքներու հաճոյ, յանկուցիլ բան մը կը տարածէ իրմէն մեղի թրթռացող խաւերուն մէջ: Ես, դուն, ան՝ առհասարակ կ'օգտուինք իրմէ. միջաշխարհային լեզուով մըն է որ կը բացուի անոր բաժակաբերանը:

Մեր գրական անանկ հրապարակին վրայ, որ բուրաստան մը ըլլալէ դադրած է գուցէ, նոր տունիկ մըն է դեռաբաց «Ծաղիկ»ը՝ հոյլ մը փափկաստուններու ձեռքով մշակուած ու մշակելի: Հողը ուր ընկած է իր կտիկը՝ արդաւանդ է. իր աճն ու պտղունն անակնկալ մը եղաւ և անյուսալի թափով մը իր առաջին պտղատուութեան երկրորդ տալա-գրութիւնն ալ ունեցաւ: Գեղեցիկ են իր ծածկաթերթերը բարբուզաի

[*] Տիգրան Զիթճեան, գաւառացի խոհուն գրիչ մը, «Ծաղիկ» «կլնական փափկ»ին խմբագրական ուղղութիւնը իր այս յօդուածով կ'ենթարկէ լուրջ քննութեան մը, մեր համայնքին ու լրագրութեան մէջ անոր ընդգրկած կոչումին ու իրականացնելիք դերին ընկերական տեսակէտէն: Անկողմնակալութիւնով կը հրատարակենք իր յօդուածը, բեմ ըլլալու համար խոհական ու կշռադատ հայեացքներով տեսութեան մը, առանց կանխապաշարուելու պաշտօնակիցի քիչ մը շատ ընդհանրացած նեղմիտ փափկանկատութիւններէ, և համոզեմով թէ՛ «Ծաղիկ» խմբագրութիւնը կը գիտնայ այդ տողերէն չվերաւորուելու չափ լայնախոհ ըլլալ: Մենք, աննախապաշար կերպով Մամուլի կոչումին ծառայելու, գաղափարներու անկախութիւնը յարգելու և գրողի մը ձայնին արձագանդ ըլլալու մեր սկզբունքին հետեւած ըլլալ կ'ուզենք, հրատարակելով ամէն անգամ նոյն իսկ մեր բարեկամութիւնը վտանգող և մեր կարծիքներուն հակառակող գրուածքներ, ինչպէս ատոր մեծ ապացոյցը տուինք, Մասիսի էջերը բանալով Ներսիսյանի գրախօսին՝ Արամ Նիկողոսեանի մէկ փառաբանութեան ճառին, ուր Տիգրան Զրաքեանի ուխտեալ ու երախտագէտ բարեկամը՝ աղէ՛կ ապացուցուց իր բարեկամութիւնը, և աղէ՛կ փոխարինեց իրերազուական ակումբի իր մէկ ընկերին սերակցորդ փայփայանքները, Ներսիսյանի ոճին արժանի ուսուցիչութեամբ և շունդալից մեծարանութիւններով մինչեւ «Խաւնաւ»ի՞ վերնագրաւանքը բարձրացնելով «նոճի»ներու պաշտամունքին նախընտրած ուխտեալ բուրմը:

Խմբ. Գիւն.

(Iris) ծխածանափայլ ծաղիկներու փունջով մը ոլորազարդ, իբր թէ ուզելով արդարացնել դաւառիկ շատ կիրառիկ ասութիւնը — «բարբուզա՞ եխ մեզսեղ ելար»։ Շրջազարդ ծաղիկագոտակին գիրկն է բոտոտածեւ եռուզեռումով ոլորիտուն «Ծաղիկ»ը, որ հոգ չէ թէ հետ ձեռաց[*] կարգացուի նաեւ Շաղիկ։ Յօդուածներ ունին կանացի փափկանկատ կարգով մը՝ նախ արիւնները, օրիորդներու խումբը անոնց ետեւէն. հոյ մը սիրուն ծաղիկմշակներու որոնց սեռը շատ անգամ իրենց գրիչ-բրիչին մէջ թէական կը մնայ։ Սիրուն են իր ծաղկուն տողադլուխները և նիւթերուն հիւթը։ Ամէն բան ալէկ, ամէն բան սիրուն, ամէն բան կանացի խնամատ ձեռքերով յարգարուած ու յզկուած, արտագին չնորհաւորութիւններու և լուրջ քաջալերանքի արժանի։

Սակայն դուրկ է ան, «Ծաղիկ»ը՝ այն հոտէն, որմէ շատ շատեր հասկնալի կերպով ախորժ կ'զգան, և քսուած է ա'յն բոյրը, որ կծու է, խրթին է, գրաքար է, անմապելի է, աղնուապետակա'ն է. որմէ ախորժ չզգար գէտն ու տգէտը, ձերն ու մերը, վարժն ու անվարժը։ Ան կը գրուի, կարծես, առանձին դասակարգի մը և ոչ թէ համայնքին ամբողջ դասակարգերուն համար։ Այո՛, «Ծաղիկ»ը մեր մէջ իր տոհմիկ դրոշմը չի ցուցներ, բնական հոտաւէտութենէ մերկ է, չպարն ու սնգոյրը սալօնակահութիւն, եւրոպայնութիւն կը հոտին. կը բուրէ բայց չի ամոքեր. կը գրուի ու կը խմբագրուի բայց չի կարգացուի. ստոյգ է ըսել թէ ընթերցասեղաններու վրայ luxu մըն է ան, քան փնտռուող մատներէ թարշամած, քրտնոտած տպագիրք մը։ Խիստ աննշան է թիւը հասկցողներուն, և ասոնց համար գրուելէ առաջ չհասկցողներու մարսելի ըլլալը խորհելու է։ Պերճանքի նկարագիրը ըլլալէ աւելի՝ առանին պիտանի իրերու և հարցերու լայնաբաց մատեններ ըլլալու է ան հաւասարապէս թէ՛ բարձրագուս ուհիներու թէ՛ գաւառուհիներու։ Երբ ձեռքդ կ'առնես «Ծաղիկ»ը, չլացած իր գեղեցկօրէն չուրջաբաց թերթերուն ձեւէն, գոյնէն ու տեսքէն, կը գտնես նաեւ սանկ քիչ շատ ալ համ ու հոտ անոր ներսը, սուաւել կամ նուազ պատուաստուած քիլ-ուած։ Մենք քիլ աբող (պատուաստիչ) կը կոչենք այն թիթեռնազգին (sphinx)՝ որ հակառակ իր գիշերայնութեան՝ մեղմուկութիւնն ունի ցերեկներն ալ համբոյրի այց տալ ծաղկանոցներու, և իր երկար գալաւրուն պատիճովը՝ արեգբաց ծաղիկներուն բաժակները կը քրտսէ (կնճիթով խուզել) կը համտեսէ և բեզնափոշին մէկէն միւսը տանելով կը քիլ (պատուաստ կ'ընէ)։ Ծաղիկներու չթիլ արողն է ան։

Այսպէս ալ գրական «Ծաղիկ»ին չթիլ արողներն են անոր չուրջը թեւածող հոյը գրագիրութիւններու, որոնք կոչուած են բոյր ու ախոր-

[*] Հետ ձեռացը՝ գաւառական գեղեցիկ և դորձածական ոճ մըն է, որ գրասեղանին կրնայ թարգմանուիլ ի մի կարուած՝ այս կէտին մէջ. իսկ յաճախ՝ կը նշանակէ (այդ) առիթով, (այս) պատուակալ, (այդ) կարգին էն։

ժանք տալու իրենց «Ծաղիկ»ին, արգասաբեր պատուաստումներ ընելու «Ծաղիկ»ի բուքատատանին վրայ երեւան գալիք ամենազգի նիւթերուն տարասեռութեանց մէջ. վնասելի ու տելալին դարձնել անոր սփռելիք շուքը, փայլ ու փառք բերելով իրենց մշակականութեան:

Սակայն միասնաբերութիւնը որ կ'երեւայ թէ ազեղ սեռին գրական եղբայրակիցներէն իրենց փոխանցուած օժիտն է՝ կրնաեմացնէ «Ծաղիկ»ին կնավայել մաքրասիրութիւնը, կը սեւատէ անոր ինքնութիւնը, և տարակոյս չկայ որ շուտով պիտի թողնեն իր շքեղ ծաղկապսակը՝ եթէ լըջութիւնը ձեռքէ թողու, եթէ օտարանալու չափ հեռանան իր էջերը տոհմային գրականութեան սահմանէն: Միասնաբերութիւնն օտարութեանց, որ զ«Ծաղիկ»ը ծիծաղելի ցուցիկ մը կը հանդիսացնէ իր գրուածքներուն մէջ: Եւ սեռն ալ չի պակսիր միասեռ այս գրականութեան մէջ, — գերմանականը, ֆրանսականը, անգլիականը իրենց կարգին հոն են. սոսմայնութիւնը դռնէն դուրս ձգուած է հոն: Էջ մը չէա կրնար բանալ առանց ֆրանսերէն տառերէ կապուած բառի մը կամ հայատառ ֆրանսաբանութեան մը. առաջին տող մը *Enfin* ալ մը կը սկսի, վասն զի հայացի «վերջապէս» բառը այդ րոպէին ամառանոցէն դեռ վերադարձած չէր գուցէ և կամ նորոյցը *Enfin* և իր նմաններուն էր. հոն ազատ մուտք ունին *armoire*, *distinguée*, *titillement*, *boat-race*, *frêpe* ք շինք ևն. ևն., առանց ազգի և ցեղի խորութեան, իբր թէ ֆրանսահին, անգլուհին ամենասերտ խօսակցութեան մը բռնուած ըլլան հայուհիի մը հետ շոգեհաւին կամըջակին վրայ. իբր թէ *armoire* քին հայերէն (*գարդա*)գարանը, *distinguée* քն ակնառուն, *titillement* քն խրսուք, *boat-race* քն ցաւաւաւը իրենց յօդուածագրութիւններուն միտքերէն արշաւած փախած ըլլային... Հարա-մատրէն!:

ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

“ՄԱՍԻՍ, ԵՒ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

Բազմաթիւ նամակներ կը հասնին խմբագրութեանս, շնորհաւորող Մասիսի գրական ուղղութիւնը, նիւթերուն շահեկանութիւնը, կարող գրողներուն իր մէջ համախմբումը, և իր գրական ու գեղեցկագիտական ընդհանուր կազմակերպութիւնը: Այդ նամակներուն մէջ, հաճոյքով կը գիտենք նաեւ որ՝ հեռաւոր իսկ ընթերցողներ՝ մասնաւոր շահագրգռութիւնով և գոհունակութիւնով մը կը յիշատակեն Մասիսի մէջ տիրող տպագրական խնամքը, ճաշակը և գեղեցկագիտութիւնը: Ուրախալի է գեղեցկագիտական ըմբռնումներու զարգացումին այս նշանը, որով ընթերցողներ կը զանազանն գեղեցիկը թափթփածէն կը ներուի՝ որ շեշտէ թէ՝ Մասիսի խմբագիրը ամենամեծ հոգը ունի նիւթերու խնամքին չափ գեղեցկագիտութիւն գնելու թերթին մէջ՝ տպագրական ճաշակին, մայելչութեան, մասնաւոր հոգածութեամբ շարել տալով, դասակարգելով յօդուածներէ իւրաքանչիւրին գիրը, վերնագիրները, ստորագրութիւնները, էջերու ձևերը, որով Մասիս չենք չափազանցած ըլլար երբ ըսենք թէ մեր մէջ միակ աննախընթաց պարբերականը կը հանդիսանայ տպագրական ճաշակի, մայելչութեան ու գեղեցկագիտութեան տեսակէտով, և իր տեսակներու անթիւ պէսպիսութեամբ ու համակ նոր տառերով կերպարանուած ընդհանուր տեսքին գեղեցկագիտական հրապոյրով, ինչ որ գեղեցկագէտ ու գեղապաշտ ընթերցողին համար քիչ-հաճելի չէ՝, որչափ իր գրական պարունակութիւնը:

Ք Ր Ո Ն Ի Կ

Օրերէ ի վեր սպասուած զոյգ մը աշխարհիկ ժամանցները՝ շաբթուան նորութիւնները եղան, որոնք ոգեւորեցին ինչպէս թերթերու սիւնակ-
ՊԱՐԱՆԱՆԴԵՍԸ ներք իրենց արծազանգներով, նոյնպէս միտքերը՝ հասնելի ժամերու իրենց անակնկալներով։ Օրեր առաջ պատահականութիւններ կը, ճանաչելի՝ հնարաւոր կերպով փայլուն ու շքեղ դարձնելու Ալքասաֆէր Տիկիններու պարահանդէսը։ Շաբթի իրիկուն Բերա Բէլէսի սրահներուն մէջ, շողշողուն պերճանքով ու գրաւիչ հանդիսաւորութեամբ ճեղի ունեցաւ Պարահանդէսը, որուն փայլը կատարեալ կ'ընէին որչափ Կարգադիր Մասնախումբին արտասովոր պատահականութիւնները, սրահին շողշողուն յարդարանքը եւ լուսանկէղ վառքը, նոյնչափ ներկաներու փառփուն արդուզարդերը, ամէնքն ալ զիրար գերազանցելու աստիճան պերճաշուք։ Ժամը չորսին՝ կառքերը իրարու ետեւէ կանգ կ'առնէին Բերա Բէլէսի դուռին առջեւ, պարասահ առաջնորդելով զունագեղ արդուզարդերով զոյգեր։ Սրահը կը շողար լոյսերու մէջ, եւ հանդիսականները կ'ընդունուէին շքեղապէս հագուած հիւրամեծարներուն կողմէ։ — Տեսար Տիրան պէյ Կիւմիւշկէրսան, Արաշէս Հիւրմիւզ, Էսուար պէյ Մսրըլը, Էլի Գուլումճեան, Զարեհ Բէլքմէզեան եւ Դասպար Էլմասեան։ Ներսը՝ ընդունելութեան կը հսկէին Մասնախումբին ազն. անդամուհիները։ — Տիկնայր Անտոն պէյ Մսրըլը, Ա. Մսրըլը, Ա. Համիպիար, Ա. Հիւրմիւզ, Արամ պէյ Կէօշէան, Գ. Սիւսպեան, Զ. Բէլքմէզեան, Ժ. Էլիասթ, Ժ. Ֆէրնանճէզ, Լ. Սէրվիլէն, Կ. Ժէրի, Կ. Դարմալի, կոմսուհի Տ'Օսթրոօզկ, Մարթէն Յակոբեան, Միքայէլ փաշա Փորթուզալ, Ն. Ներսէս, Պ. Խօրասանճեան, Պառնուհի Է. Տը Վանտօլըր, Ս. Համամճեան, Վ. Էսաեան եւ Ասիլէ Կ. Կիւմիւշկէրսան։ Պարահանդէսը սկսաւ ժամը Ծին եւ պարերը իրարու յաջորդեցին անհուն։

ոգեւորութեամբ։ Լոյս, ճոխ արդուզարդեր, թէ կանացի սեռին մէջ եւ թէ այրերու, ծաղիկ ու զոհար, զեղեցիկութիւն ու պերճանք, թեւ-թեւի պտոյտներ ու անուշ ասուլիսներ, զուարթ արանութիւններ ամէն կողմ, ինչպէս **պիւմէլին** շուրջը, բաժակներու քաղիւմ, խախճանութիւն, ցնծուն ճիչեր ու հրաւառ ակնարկներու փոխանակութիւն, նազանք, շնորհալիութիւն, կնամեծարութիւն ու կանացի վախճագեղութիւն, պար, անընդհատ, անընդմիջական յաջորդութիւնը այս բոլոր վայելքներուն՝ դժուար կը դարձնէր հանդիսականներուն՝ բաժանումը պարասահէն, երբ անսաման երանութեան, խախճանքի, անակնկալներու մէջ կ'աւարտէր **ԲՈՒԿՍԵՆ**, որ պարահանդէսին ամէնէն եզակի մասը կը կազմէր, եւ զոր վարեցին Օր. Փորթուզալ փաշա, Օր. Աննա Ներսէս, Արամ պէյ Կէօշէոյլը եւ Պ. Քիքիրիքո։

Եթէ ոչ նոյն պերճանքին ու շքեղութեան մէջ, բայց նոյնչափ յաջող երաժշտական վայելք մը **ՆՈՒԱԳԱՆԱՆԴԵՍԸ** եղաւ յաջորդ ցորեկ Բընէ Շանի Թասերասրանին մէջ Օրթաքէօյի եկեղեցիին նպաստին տուած նուագահանդէսը, մասնակցութեամբ անուանի արուեստագէտներու, Սրահը՝ օժեակներով ու զետեղումով գրաւուած էր ընտրուած ներկաներու բազմութենէ մը, նուագահանդէսը սկսաւ Համիսիլէ կայսերական քայլերգով, որ ունկնդրուեցաւ ոտքի վրայ եւ ծափահարուեցաւ։ Յաջորդեց Տփօրափ Quatuor en fa majorը, զոր յաջորդապէս նուագեցին Ա. եւ Ի. Պրաուն, Բ. Մերսիսիլէ եւ Ս. Կոլսէնպէրկ, որոնք նուագահանդէսին երկրորդ մասին մէջ ալ ունեցան մասնակցութիւն մը։ Տեղացի զեղարուեստաւորներու համար նորութիւն էին մասնաւորապէս Չէրնէցքի քոյրերը, Օր. Նասիլէժսա եւ Վէրա Չէրնիցքի, եւ եօթը տարու հանճարեղ ջութակահար Պրն. Հայրիկ Վարսկերպեր, ինչպէս նաեւ Օր. Քօհան Չէրնէցքի քոյրերէն Օր. Վերա՝ որ դաշնակով ընկերացաւ Օր. Նասիլէժսաի երգերուն եւ առանձին ալ կտորներ զար-

կաւ, Տէր է բարձր արուեստի մը, արժանի իր համբաւին, արդէն համաշխարհային ըլլալու մօտ, իր նուագածութիւններուն միջոցին, կը նոյնանայ ան դաշնակին հետ, որուն մէջ հոգիէն ու զգացումներէն բան մը կը դնէ, լեզու հանելով զայն։ Այդ արուեստն էր որ զինքը սիրացուց կիրակի օր փայլուն յաջողութեան մը, զոր ներկաները արժեցուցին իրենց համակիր ու սրագին ծափահարութիւններով ու ծաղկեփունջերով։ Երգելու արուեստին մէջ յաջող արուեստագէտ մըն է նաեւ իր քոյրը՝ Օր. Նասիէժա, որ նուագահանդէսը ոգեւորեց իր ռուսերէն սիրուն երգերովը, մէկ քանին ընկերակցութեամբ Օր. Քօֆանի, յաջողութեան ճամբուն մէջ երգչուհի մը, նուագահանդէսին փայլը կազմող սաղանդաւոր արուեստագէտներու այս երրորդութեան մէջ, եզական առիթ մըն էր ներկայութիւնը մանկասի ալն արուեստագէտին, Պրն. Հայնրիխ Վայսկերպերի, որ ջութակի վրայ Թարգմանեց ամբողջ հոգին ու յուզումը իր զարկած կտրներուն, հակառակ իր պզտիկ հասակին, որուն վրայ սասանող խարսեաշ երկայն մագերէ գրկուած իր մանկական գլուխին մէջ մտող վրնար մեկնել էր՝ ինչպէս կրնայ զարգնացած ըլլալ ա՛յդչափ լայն ընդունակութիւն ու կարողութիւն, ընդունակ հաւասարմօրէն արտայայտելու մեծ վարպետներու ամէնէն դժուար կտրներուն ոգին։ Երաժշտութեան երեք հսկայ սիսաններէն՝ Շօքէնէ, Լիսթէ, Մօցարտէ իր աչքը, քիթը ու ճակատը գողցած այդ զարմանալի էակը, անոնց զիմագիծերուն մէջմէկ մասին իր յայտնի նմանութեան հետ, ունի նաեւ գերազանցապէս՝ երաժշտութեան մեծ սաղանդի մը խտտնուածքը։

Եւ այսչափ շահեկան արուեստագէտ դէմքերէ կազմակերպուած նուագահանդէս մը յաջողապէս գլուխ հանելուն համար, սրագին շնորհաւորութեան արժանի կը դառնան Կարգադիր Մասնախումբին համակերելի անդամները, որոնց մէջ կարելի չէ չլիշատակել մասնաւորաբար անխոնջ ու գործօն դերը Երուանդ Է.Փ. Եռստեֆեանի։

Հիմնադիր. Կ. Ս. Ի. Ի. Ի. Զեմ. Արտանաւեր. ՏՕ. Բ. Ե. ՄԱՍԻՍ. Տպ. Յ. ԱՍԼՏՈՐԵԱՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԵՆ

ՄԱՍԻՍԻ ԵՊԻՍԿՈՍՆ ՄԱՐԿԱՐԱՆ

Երուսաղէմի միաբանութիւնը եւ բովանդակ՝ Հայ կղերք իր արժանաւորագոյն ներկայացուցիչներէն մէկը կորսնցուց՝ մահովը Տ. Մամբէ Եպիսկոպոս Մարկոսեանի։ Հանգուցեալ Մրբազանը երիցագոյն անդամն էր Ս. Յակոբեանց Միաբանութեան, մաւուր ու պատկառելի դէմք մը, որուն անհետացումը շատ զգալի պիտի դառնայ Երուսաղէմի վանքին մէջ։ Տ. Մամբէ Մրբազան պաշտօնի սիրահար եկեղեցական մը չէ եղած. անգամ մը միայն իբր նուիրակ Երջած է Ռուսահայերուն մէջ եւ Երուսաղէմ դարձին՝ գոհացած է Տփղիս Ժողովի անդամակցութեամբ։ Շատ հմտալից ու գեղեցիկ հարգներ գրած է, որոնցմէ մէկ բանին հրատարակուած են Տ. Թորոս Քննչ. Զուլայեցիի Եկեղեցիին մէջ։ Նշանաւոր դարձած է մասնաւորաբար իբր արուեստագէտ, նկարելով բազմաթիւ կրօնական պատկերներ՝ որոնք նմանապէս գեղարուեստական գործեր կրնան նկատուիլ։

։ ։ Սուրհանդակ որ իր Տփղիսի սկարութեանը պատնետով դարբեցուցած էր հրատարակութիւնը ժամանակաւոր կերպով, այս շաբթուրէն սկստ հրատարակուիլ շաբաթ երկու անգամ, չորեքշաբթի ու շաբաթ օրերը, նոյն ծառայով եւ ուղղութիւնով, իր նախկին խմբագրներուն աշխատակցութեամբ, բացի Արամ Անտոնեանէ, որ հրաժարած է Սուրհանդակի խմբագրութեան իր մասնակցութենէն։

։ ։ Հանելի Տփղիս մըն է արհաւանգը Հայ երիտասարդի մը օտար միջավայրի մէջ Հայ աղջկան մը հետ ամուսնութեան։ Տիար Նորայր Վրոյր, — հօրաբնորոտ Տփղիս. Երուսաղէմ Մասիսի, — Պրիւսէի մէջ ամուսնացած է Օր. Պէտրիս Գոյանեանի հետ, պաշկապրութեամբ Տ. Վառապաւուր Քն. Բիպարեանի։ — Գաւառացի ուսուցիչ եւ «Բիպարեանի» ծանօթ աշխատակից Տիար Հայկազն Հայեւեան՝ Մարգուտին մէջ ամուսնացած է Օր. Հայկունի Տիպանեանի հետ։ — Շնորհաւորութիւններ՝ երկու նորապսակ ամուսնեւորներ։

Կարգալ Մասիսի 5 ոսկիի մրցանակը շահողը՝ կողմին վրայ։

ըլլալուն, անոր եղբայրն ալ դատարարը կը ծեծէ դպրոցին մէջ: (Ինչ
 դարմանալի մանկալարժութիւն և ինչ դարմանալի հաշուեյարդարու-
 թիւն. Ծ. Խ.): — Գում-Գարաւի եկեղեցիին մէջ կատարուած յուզա-
 կաւորութեան մը պահուն Տ. Գարեգին քհ. պաշտօնէի գայթակգութեան մը
 ասիւթ կուտայ՝ դադարը մեռելաբան զբան տալեւն չանցընելու համար:
 (Իրաւացի է Տ. Հօր վարմունքը. Ծ. Խ.): — Խորքերդի առաջնորդ Տ.
 Խաչատուր վրդ. դեկտ. 17 | 30ին քարտեր է Ս. Յակոբ եկեղեցիին մէջ և
 Մծբնայ Հայրապետին կեանքը թացատելէ ետքը, զբուտներ է կրթա-
 կան դարձին գոհացուցիչ վիճակը, մասնաւորաբար Թլկաթնցիի վարժա-
 րանին յաջող ու փայլուն ընթացքը: — Աբմաշի Դպրեւանքին անդա-
 նիկ վեց ծառայողն վարդապետանէն Տ. Մաշթոց Ծ. Վ. Փափազեան,
 որ կը պաշտօնավարէր Ամերիկայի և Պարսկաստանի մէջ, Պօղոսէն
 Ամերիկայի Առաջնորդին ծանուցած է թէ՛ կը թողու կրօնական վիճակը:
 Կարգաթող վարդապետը զբաւ է նաեւ Ս. Հայրապետին թէ իրեն հետ
 կը ընակի կին մը, իբր թէ իր մօտեւ եղբոր կինը՝ որ Առաքելային յիշած
 «Բոլոր-կիներ» ըլլալու չէ: — Եփրատ Գօլէճի Կիսամիտայ քննութիւնները
 աւարտելով, Կաղանդի հանգէս մը արուեր է, աջակցութեամբ Մր.
 Բիւլիի և Փրօֆ. Կարապետ Էֆ. Սողիկեանի. ուշադրութիւն դրաւեր են
 զաւելչապի զբաւածները՝ Պարնայք Կրպտ. Շախեանի, Նուրիճան Մով-
 սէսեանի, Պետրոս Թէրզեանի, Միհրան Պատմաճեանի, Արմենակ Օհան-
 եանի, Ոսկան Աւագեանի: — Ատարազարի Ներսէս-Սանդխտեան վարժա-
 րանին մէջ հանգէս մը արուեր է: Դաշնակը վարեր են Օր. Ազաւնի
 Մուրադեան և Օր. Եպրաքոյէ Միճեան: Նախադասեր է Տնօրէն Պաղարազ-
 եան Էֆ. Խօսեր են Տօքթ. Գապարեան Էֆ. և Միհրան Էֆ. Տէմիրճեան:

«ՄԱՍԻՍ»Ի 5 ՈՍԿԻԻ ՄՐՅԱՆԱԿԸ

Մասիսի մէջ ծանուցուած 5 ոսկիի ծանօթ մրցանակը շահեցնող
 լուծումը հրատարակած էինք նախորդ 9 թիւով, կողքին լուրերու էջին
 մէջ, հետեւեալ տողերով. «Ծանօթ դրավաճառ Յովհաննէս Էֆ. Էսկի-
 եան պանքնօթ մը կը խոստանայ շնորհել այն անձին որ կրնայ հաստա-
 տել իր գրատունին գործառնութեանց մէկ թերին»: Ինչպէս կը տեսնուի
 մրցանակին յայտարարութեան մէջ, այս տողերը ձշղիւ կը համապատաս-
 խանեն տաղարկին, ուր կ'ըսուի. «Մասիսի որ և է մէկ էջին մէջ,
 զբուտքի մը մէկ անկիւնը պիտի գետեղաւ քանի մը առջով ծանուցում
 մը, որ» ևւայն: Ուրիշ եօթը հազիւներէ առաջ՝ զայն առաջին անգամ գտած
 ու ներկայացուցած է Էսկիեան Էֆ.ի՝ Տիրա Մանուկ Տ. Ստեփանեան,
 Պաշէ-Գարու Մաքսին Փողոց, Թիւ 14, մանրավաճառ, Ակնցի: Աւելորդ
 է ըսել թէ՛ Էսկիեան Էֆ. է ստացած է 5 Օսմ. ոսկին՝ զոր ձգած էինք
 իր քով: Ահաւասիկ իր նամակը. —

22 Յունուար 1907.

«Մասիսի Ա. թիւէն հետաքրքրութեամբ կը հետեւէի 5 ոսկի
 պարգևի մրցումին, ամէն կողմ փնտռելով հետք մը, վերջապէս

գտած ըլլալ կարծեցի նախորդ չարախ, սա սողերուն մէջ. «Ծանօթ գրավածառ Յովհաննէս էֆ. Էսկիւնան պանքնօթ մը կը խոստանայ չնորհել այն անձին որ կրնայ հաստատել իր գրատունին գործառնութեանց մէկ թերին»։ Եւ կէս հաւատքով կէս տարակոյտով երբ վաթացի յիշեալ գրատունը և յայտնեցի նպատակս՝ զարմացմամբ ականջ որ պանքնօթ մը կ'երկարէր ինձ ստուգիւ։ Առի, տոորու գրութիւն մը ուղեց, ատրէսս առաւ և մեկնեցայ։ Շնորհակալութեամբ կը հաստատեմ զայս խմբագրութեանդ։

ՄԱՆՈՒԿ Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ»

Բարի վայելում, մեր ուշիմ ու աչք բաց Ակնցի ընթերցողին։
ԽՄԲ.

Գաւառներէ և թաղերէ թղթակիցներ կ'ուզուին՝ Մասիսի հաղորդող անդին եկեղեցական, կրթական ու դրական կեանքին ու եղելութիւններուն վրայ տեղեկութիւններ։

ՆՇԱՆՍԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ. — Օր. Նուարդ Նազարեթեան և Տիար Արքաի Բեօթեան՝ նշանուած, Սամաթիա, Արթաքի էֆ. Բէօլէեանի ընտկարանին մէջ։ — Օր. Եւգինէ Ա. Գաբամանեան և Տի. Ներսէս Ներսէսեան՝ նշանուած, Սկիւտար, Գաբամանեաններու ընտկարանին մէջ։ — Օր. Եռանդիկ Պ. Չալքեան և Տիար Վահրամ Մ. Անտոնեան՝ նշանուած։

ՄԱՐՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — Օր. Մաքրունի՝ ամուսնացած Տիար Բարսեղ Շանիկեանի հետ, Կիրատոն, պատկազրութեամբ Տ. Կարապետ ք. Թուխմանեանի։

ՄԱՀԵՐ. — Տ. Մանուէլ Վրդ. Պօլանեան. Մարաշի Հայ Հում. Պատրիար. Փոխնորդ և Զմմառի վանքին միաբան։ — Այրի Տիկիմ Եւպրատիա Մ. Քառակիւլեան. Յուդարկ. Մաքրի-Բէօյ. Թաղ. Ազգ. գերեզմ.։ — Ասիկ Էֆ. Շիրիմեան. Յուդարկ. Սկիւտար Մ. Խաչ. Թաղում. Սկիւտարի գերեզմ.։ Ակնցի Գրիգոր Էֆ. Սարբեան. յուդարկ. Մայր. Եկեղեցի. Թաղում Պալըզլըի Ազգ. գերեզմ.։

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՆԿ.

ՊԱԼՔԱՆ

Դրամադուլիս և պահեստ ձրանք 9,500,000

Վերապահովագրական

դրամադուլիս և պահեստ » 142,740,000

ՊԱԼՔԱՆ Բնկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ զլիաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամասնելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.։

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՌԻՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյէ Օրիենդ Պանֆի կից, Սինասոն համ.

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթիւրթ ազգային, գրական, և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դր. գաւառներու համար 108 դր. և օտար երկիրներու համար 35 ֆր: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանոօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

Հանդուցեալ Կարապետ Էֆ. Իւթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրաւթաններու քով. կեղբոնատեղի Աշճեան գրատուն:

Հնոստեանեան Գաղտնիքներ 3 հատոր	15	դր.
Արուարծանին Տղան 3 հատոր	15	դր.
Հանրակառքին Ոճիրը	5	դր.
Ամուսնութիւնք Բարիգու	5	դր.
Քաղաքական Տնտեսութիւն. Ժողէֆ Կառնիէ	5	դր.

ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՐԿԱԾՆԵՐ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած:

Կեդրոնատեղին Բեդերապուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպատուաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի:

ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կոտորուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,666 ֆր. ք.
Երաշխաւորութեան գումար աւելի քան 149,852,000 »

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած
դրամագլուխ և վնասներու հատուցում 355,840,000 »

1903 տարուան մէջ գանձուած ապահովագրին և տոկոս 64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ագարեան խան, Վոյլոտա, Ղալաթիա: (8-10)



ԱՐԱՄ ԳԱՐԱԳԱՇ

ԾԱՆՕԹ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ամէն առտու կանուխ կը դառնուի Սկիւտար. Իճա-տիյէ իր բնակարանը. և ամէն օր ժամը 5—11½ Պոլիս, Պահլէ-Գարու, Պին պիր 2էշիտի դէմ, թիւ 12, իր աշխատանոցը:

"ՄԱՍԻՍ"Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան

60 դրշ.:

Արտատահմանի

» »

14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւներէն ձրիաբար երկու գիրք, իրենց ընտրանքին համեմատ, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զհրատարկուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Նամակ կամ որ եւ է գրութիւն ուղղել խմբագրութեան հասցէին. —

در علی باب عالی محاده نمده نوردر ۵۲ « ماسیس » غرضی اداره ماسیس

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Պապր-Ալի ճուսսէսի, բիւ 52. Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue „MASSIS“

Avenue de la Sublime Porte, No. 52.

CONSTANTINOPLE

3-Յ ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՄՐՅԱՆԱԿ ՄԸ

Հաստատած ենք գաւառական գործակալներու միջեւ, զոր կրնայ շահիլ ո՛ր եւ է փութաջան գործակալ: Այն անձը կամ գործակալը, որ մինչեւ փետրուարի վերջը ամէնէն բարձր թիւով բաժանորդը կը գտնէ, և ամբողջովին կը հասցնէ մեզ բաժանորդագիրն, կը ստանայ 3 Օսմ. ոսկի: 30է վար թիւ մը չընդունուիր այս մրցումին համար: Այս բաժանորդներէն ամէնքն ալ իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ձրիաբար (սեւ պարգեւաւոր բաժանորդագրութիւն): Ո՛ր եւ է գաւառաբնակ անձ կրնայ շահիլ այս պարգեւը: Պէտք չկայ սպասելու 30 բաժանորդին լրանալուն՝ որպէսզի գործակալ մը զանոնք ամբողջովին ղրկէ խմբագրութեան: Կրնայ պարբերաբար ղրկել իր բաժանորդները, յիշելով միշտ իր անունը, և երբ մեր տոմարին մէջ լրանայ 30 թիւը՝ անմիջապէս կը ստանայ 3 Օսմ. ոսկին: Մրցանակը շահողին անունը՝ բնակութեան տեղովը՝ պիտի ծանուցուի Մասիսի մէջ: Մէկէ աւելի 30 թիւը անցնողներ՝ ամէնքն ալ պիտի ստանան նոյն պարգեւը: Մրցանակին գումարը կը բարձրանայ 4 ոսկիի՝ երբ գործակալ մը կ'ընդգրկէ 40 թիւը, և 5 ոսկիի՝ երբ 50 ըլլայ թիւը: Եւ շարունակաբար: Սահմանը ընդարձակ է: Օ՛ն, ուրեմն, գէպի ամէնէն բարձր թիւը: